ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող

Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

21.08.2020թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի դիմաց 2015թ. «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կառուցված թեքահարթակի քանդման մասին:

/Քննարկում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ.
ՀՀ Լոռու մարզպետարան,
Վանաձորի համայնքապետարան,
«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ,
«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ/

2. ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն և ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշումներով կանոնակարգվող աջակցող միջոցների տրամադրման գործընթացի մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

3. Madre հիմնադրամի աջակցությամբ՝ «VIVA Girls» դրամաշնորհի օժանդակությամբ «Հաշմանդամություն ունեցող հզոր աղջիկներ և կանայք հանուն հզոր Հայաստանի» ծրագրի շրջանակներում 2020թ. օգոստոսի 16-ին կայացած միջմարզային երկրորդ հանդիպման մասին:

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ»
ՀԿ նախագահ Անուշ Ասլանյան/

4. Համագործակցության աշխատանքի մասին. «Ագաթ» ՀԿ-ի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ ՀՀ Լոռու մարզում իրականացված ընտրատեղամասերի մատչելության և նարառականության համապարփակ հետազոտություն:

/Զեկ.՝ «Ագաթ» ՀԿ-ի ծրագրերի բաժնի ղեկավար Գայանե Գրիգորյան, նախնական տեղեկատվությունը փոխանցվել է էլփոստով, ամփոփը կներկայացվի առաջիկա նիստերից մեկում/

5. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից ներկայացված առաջարկների մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

6. Այլ հարցեր:

Ա ր ձ ա ն ա գ ր վ ե ց՝

Ի գիտություն ընդունել Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի թեքահարթակի քանդման հարցով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից վարույթ սկսելը: Այն է՝

«Մարդու իրավունքների պաշտպանը Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի թեքահարթակի քանդման հարցով ուսումնասիրություն է նախաձեռնել և պարզաբանումների պահանջով գրություններ հասցեագրել իրավասու պետական մարմիններին:

Խնդրի բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրության նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները այց են իրականացրել Վանաձոր քաղաք: Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ հասարակական կազմակերպությունների, հաշմանդամություն ունեցող անձանց, Լոռու մարզպետարանի, Վանաձորի համայնքապետարանի ներկայացուցիչների, ավագանու մի շարք անդամների, ինչպես նաև մշակույթի պալատի տնօրենի հետ:

Այս պահի ուսումնասիրության արդյունքների հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է հետևյալ հիմնական խնդիրները՝

1. չի ապահովվել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը թեքահարթակի քանդման վերաբերյալ որոշման կայացման գործընթացին,

2. մշակույթի պալատի կողային մուտքերը, որոնք առաջարկվել էին որպես խնդրի լուծում, մատչելի և հասանելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս առնչությամբ Պաշտպանն արձանագրում է, որ կողային մուտքերը մատչելի և հասանելի դարձնելով, այդուհանդերձ, պետությունը չի երաշխավորել հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման իրավունքի լիարժեք և արժանապատիվ իրացման հնարավորությունը, քանի որ գլխավոր մուտքը չի ապահովում նման հնարավորություն:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդրի կարգավորման տեսանկյունից կարևոր է համարում հետևյալ սկզբունքների ապահովումը՝

1. մշակույթի պալատի գլխավոր մուտքը պետք է լինի մատչելի և հասանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ առանց խտրականության,

2. մշակույթի պալատի մուտքի մատչելիությունն ապահովող ցանկացած լուծում պետք է դիտարկվի ոչ թե հաշմանդամություն ունեցող անձանց՝ դրա օգտագործման հաճախականությունից ելնելով, այլ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման պետության պարտավորությունների համատեքստում,

3. մշակույթի պալատի գլխավոր մուտքն ապահովող ցանկացած լուծում պետք է լինի այնպիսին, որ երաշխավորի հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն տեղաշարժվելու իրավունքի իրացումը՝ առանց լրացուցիչ աջակցության անհրաժեշտության: Այս նպատակով համայնքը պետք է ապահովի հավասար հնարավորություններ յուրաքանչյուր անձի համար անկախ հաշմանդամությունից,

4. մշակույթի պալատի տնօրինությունը պետք է երաշխավորի խնդրի լուծման ցանկացած տարբերակի անխափան և անվտանգ շահագործումը՝ անկախ մշակույթի պալատում միջոցառման առկայությունից,

5. հաշմանդամություն ունեցող անձինք պետք է լիարժեք ներգրավված լինեն իրենց առնչվող հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը:

Հիշեցնենք, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժին, որն ապահովում «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ Պաշտպանին վերապահված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումը, ինչպես նաև պետական, տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության գործառույթները:»:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ Լևոն Հախինյանին՝

Նախապատրաստել գրություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի թեքահարթակի քանդման հարցով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սկսված վարույթի և հանրային մեծ արձագանքի մասին:

2. Մարզպետարանի Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հերմինե Գասպարյանին՝

Նկատի առնելով կորոնավիրուսային համավարակի պատճառով «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից Վանաձորում իրականացվող «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագրի ֆինանսական միջոցների ուշացման փաստը, բանակցել «Դիակոնիա» ԲՀԿ-ի հետ մարդասիրական լրացուցիչ օգնություն տրամադրելու հարցով:

3. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Նախապատրաստել շրջաբերական գրություն ուղղված ՀՀ Լոռու մարզի համայնքների ղեկավարներին՝ համայնքի տարածքում թեքահարթակների կառուցման, ապամոնտաժման և մատչելի միջավայրի հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ տեղեկացնել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովին, իսկ որոշում կայացնելիս ներկայացնել հարցի վերաբերյալ կազմա-

կերպված հանրային լսումների, կայացած քննարկումների, կազմված նախագծերի մասին հիմնավորումներ:

բ/ Նախապատրաստել գրություն Վանաձոր համայնքի ղեկավարին առաջարկելով՝

✓ Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի Վանաձորի համայնքապետարանի կողմից քանդած թեքահարթակի փոխարեն նախագծել և սեփական միջոցներով կառուցել պահանջվող չափորոշիչներին համապատասխան թեքահարթակ:

✓ Վանաձորի Երևանյան խճուղու /հրշեջ ծառայության տարածքում՝ կույրերի բնակելի շենքերի հարևանությամբ/ վրա տեղադրել ճանապարհի արհեստական խոչընդոտ՝ Վանաձորի թիվ 24 դպրոց հաճախող երեխաների համար ապահովելով անարգել երթևեկը:

4. Հանձնաժողովի անդամ ունեցող Հասարակական կազմակերպություններին՝

Կազմակերպության կողմից կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

5. Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապերի բաժնին՝

Ապահովել աշխատանքների հրապարակայնությունը և այն զետեղել ՀՀ Լոռու մարզպետարանի կայք-էջում:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Կազմեց՝ Վ.Ջաղինյանը /2-33-99/